Ես հասկացայ, Մըհէն կատարել էր այն յատիշտակութիւնը, ինչ որ բեկը քանի որպէ առաջ ինձ էր առաջարկում: Նա այս արել էր առանց ոչ ոքի յայտնելու: Առաջին օրը, երբ նա եկել էր Ասլանի մօտ եւ իմացել էր, որ ձին տակաւին չեն բերած, առանց նրա հետ խորհուրդ անելու, անյայտացել էր, եւ ահա դարձաւ նա մեծ աւարով: Թէեւ Մըհէն մեզ ոչինչ չասեց, բայց երեւում էր, որ նա կռիւ էր ունեցել քրդերի հովիւների հետ, եթէ ոչ, այլապէս վիրաւորած լինել չէր կարող:

Մըհէն չսպասեց մինչեւ ընթրիք տային, եւ խնդրեց մի քանի հացեր եւ մի մեծ կտոր պանիր, բոլորը կերաւ, եւ խմելով մի ահագին ման ջուր, գնաց քնելու: Խղճալին երեք օր էր, որ մի որպէ եւս հանգստացած չէր:

Գիշերից բաւական անցել էր, բայց տակաւին վրաններից շատերի մէջ լոյս էր երեւում: Մեր ընթրիքը տոեցին. նա պատրաստուած էր խիստ պարզ կերակուրներից, որոնց մէջ գլխաւոր տեղն էր բռնում մի ամբողջ խորոված գառը:

Ընթրիքից յետոյ բեկը կամեցաւ մեզ զուարճացնել եւ կանչել տոեց մի երգիչ: Նա մի փոքրիկ մարդ էր, ոտքերով կաղ, որ շատ նմանում էր մեր աշուղներին, որոնք հազիւ ազատ են լինում մի որեւիցէ մարմնական արատից: Երգիչն ածում էր ջութակի վրայ:

Ինձ մինչեւ այնօր չէր պատահել լսել մի երգ, որ այնքան յատկանիշ լինէր ազգային բնաւորութեան, որ այնքան արտայայտող լինէր ժողովրդական ոգուն, որպէս քրդի երգը: Քրդի երգը լսելիս, մարդ միշտ երեւակայում է՝ իրան – քրդին, նիզակը ձեռին, սեգ նժոյգի վրայ նստած, կայծակի պէս սլանում է լեռների մէջ...

Քուրդ աշուղի երգածները հասարակ տաղեր չէին. նա երգում էր մի ամբողջ վէպ, որ ժողովրդական պօէտը առել էր կենդանի անցքերից: Դա մի քաջազնական բանաստեղծութիւն էր, որի մէջ խիստ ազդու կերպով նկարագրուած էր այն արիւնահեղ կռիւը, որ ունեցել էր բեկը քրդերի մի ուրիշ ցեղի հետ, եւ որի մէջ սպանուել էին նրա երկու որդիներն եւ աւար էին առնուել նրա հօտերը:

«Այսպէս, ասում էր Ասլանը, մի ժամանակ մեր նախարարների տներում երգում էին Գողթան երգիչները, բայց նրանց ձայնը լռեց այն օրից, երբ հայերի մէջ քաջազնական հոգին յանգաւ»...

Աշուղի բոլոր երգեցողութեան ժամանակ տխուր էր բեկը: Վրէժխնդրութեան արիւնը բորբոքւում էր նրա աչքերում, որովհետեւ նա լսում էր սի-